

5. Ախշիյն յէլաւ գնաց խօր դիւան, ասաց. — Բա՛բօ, ընչե՞ կը մտածես:

Խէր պատասխան տուեց ինոր, ասաց. — Ես ինոր խամար կը մտածեմ, Աջմու թահեաւոր տը կեայ մեր թահեաւորութէն տ'առնի, զըմէն տ'սպանի, կերի ար տանի: Թէ յըմ ախշիկ տամ, էն աջամ ա, ես խայ էմ:

6. Ախշիկ ասաց. — Բաբօ, որ յաջամ տը կեայ, զըմէն տսպանի յըմ սաքաբօլ, աղէկն էն ա, ես էրթամ, թոխ մարթիւ պան չըլնի: Բաբօ, ջուղար տու աջմու թահեաւորին, կեայ ձի տանի. ես մինակ մեռնեմ աղէկ ա յըմ խօր, մօր, ախպօր թերէն¹:

Խէր չըր ուզի էտ պան. տեսաւ որ ճար չկայ, ջուար յէօրէօխկեց աջմու թահեաւորի մօտ. — Արի քեօ խարս տար: Զըր ուզի աէր, անճարաց խառ:

7. Աջմու թահեաւոր էկաւ խարս տանի:

Ախշիկ կնաց խօր մօտ, ասաց. — Բաբօ, Աջմու թահեաւորին ասա՛, ձի կը տանի, չոկ տեղ մի սարայ շինի, ձի տանի էնտեղ տնի. մէկ տարի մը² ձի չը կեայ, յըմ յերիս չը տեսնայ:

8. — Բաբօ, տիւ էլ մէկ վարթապետ տիր խը ձի, մէկ էլ խտամ³, ես կերթամ. ես ինչ քեղ ասի, աջմու թահեաւորին խնթրի՛, որ նա էն պաներ կատարի:

9. Խէրն էլ ախշիկայ ասածը Աջմու թահեաւորին խնթրելով ասաց: Էն էլ ուզեց էտ պան, իրան խարս տարաւ ուր քեաղար, մէ չոկ սարայ շինեց, էնոնց խաց, կերակուր էօրէօխկեց էնտեղ: Աջմու թահեաւորն էլ ասէր էր ինոնց, սարից տիւս չը կեաք:

10. Կէս տարի սարի մէջ մնացին, յետև ջուար յէօրէօխկեցին թահեաւորի մօտ, թէ. — Մենք պռնաւո՞ր ենք էսա տեղ, որ չես թողնի տանից տիւս կեանք:

Թահեաւոր ասաց. — Իրաւիւնք ունեն, տիւս կեան, կան կեան:

11. Տռնապաներ իրաւիւնք տուին, տիւս էկան կան կեաւիւ: Թահեաւորի ախշիկն էլ ծով չէր տիտէ, թէ ինչ պան էր. կան էկան խաս քախշի մէջ, տիւս էկաւ, տեսաւ Կապոտ ծով: Մովի պռուկ չը տեսաւ. էտա ցեղ⁴ մտածելով ծովու պերան զե կնաց. կնաց մի քարափ տեղ կայնեց, իրիշկեց, տեսաւ, որ ծովին ծէր չըկայ. նեղացաւ նստեց, ասաց. — Ա՛խ երանի մէ փշուր ճիւր կըլնէր. ես խմէի:

12. Մի քիչ էլ կան եկաւ, քեարերի մէջ ճիւր չը տեսաւ.

1. Փոխարէն, կողմից: 2. Մօտ: 3. Աղախին: 4. Այգալիս: